ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 2

1. Մրցույթը 2
2. Նպատակը 3
3. Ժամկետները 4
4. Գիտահետազոտական խումբը 4
5. Խմբի ղեկավարը 4
6. Խմբի անդամները 6
7. Կազմակերպությանը ներկայացվող պահանջները 7
8. Ակնկալվող արդյունքները 9

II. ՀԱՅՏԻ ԼՐԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ 12

9. Հայտ և անհրաժեշտ փաստաթղթեր ներկայացնելը 12
10. Նախահաշվի կազմությունը 13

III. ՀԱՅՏԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ 14

11. Հայտերի համապատասխանությունը Մրցույթի պայմաններին 14
12. Գիտական փորձաքննությունը 15
13. Գիտական փորձաքննության առաջին փուլը 15
14. Գիտական փորձաքննության երկրորդ փուլը 15
15. Գիտական փորձաքննության երրորդ փուլը 16
16. Գնահատման արդյունքները 17

IV. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ 18

17. Պայմանագրերի կնքումը 18
18. Հաշվետվությունը 18
19. Լրացուցիչ տեղեկություններ 19
20. Նախագծի ֆինանսավորման դադարեցումը 21

Հավելված N 2.1 23
Հավելված N 2.2 24
Հավելված N 2.3 25
Հավելված N 2.4 26
Հավելված N 2.5 27

Հավելված N 2
ՀՀ ԿԳՄՍ նախարարի
«08» նոյեմբերի 2023 թ.
N 2337 -Ա/2 հրամանի

ՀՐԱՎԵՐ
«ՀԵՌԱՎԱՐ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՄ 2024»
ՄՐՑՈՒՅԹԻ

Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Մրցույթը

1.1. «Հեռավար լաբորատորիաների հիմնադրում 2024» մրցույթն (այսուհետ՝ **Մրցույթ**) անցկացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի (այսուհետ՝ **Նախարար**) 2023 թվականի նոյեմբերի 8–ի N 2337-Ա/2 հրամանի:

1.2. **Մրցույթը** կազմակերպում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն (այսուհետ՝ **Կոմիտե**)՝ առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ հաստատված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգով»:

1.3. **Մրցույթն** ուղղված է արտերկրի գիտնականների ղեկավարությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորմամբ ծրագիր իրականացնող կազմակերպությունում (այսուհետ՝ **Կազմակերպություն**) հեռանկարային, ժամանակակից գիտական ուղղություններով նոր ստորաբաժանումներ ստեղծելուն:

1.4. **Մրցույթն** իրականացվում է գիտական և գիտատեխնիկական գործունեության բոլոր բնագավառների մասնագիտություններով (Հավելված N 2.1):

1.5. **Մրցույթին** մասնակցության համար անհրաժեշտ է ներկայացնել հայտ (այսուհետ՝ **Հայտ**), որը ներառում է գիտական նախագիծ (այսուհետ՝ **Նախագիծ**) և պահանջվող այլ փաստաթղթեր/տվյալներ:

1.6. **Նախագիծը** (Հավելված N 2.2) պետք է լինի հավակնոտ, խոստումնալից և իրագործելի:

1.7. **Մրցույթում** ներկայացված հրապարակումը պետք է ընդգրկված լինի միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում («Science Citation Index Expanded (SCIE)»,

«Social Sciences Citation Index (SSCI)», «Emerging Sources Citation Index (ESCI)», «Arts&Humanities Citation Index (AHCI)»), **կամ** Web of Science գիտատեղեկատվական հարթակի գրքի հղման ինդեքսի (Book Citation Index) հրատարակիչների ցանկում ներառված հրատարակչությունների կողմից հրատարակված գիտական աշխատությունում, որպես գրքի գլուխ կամ հոդված ժողովածուում, **կամ** «Scimago Journal & Country Ranking» պորտալի առնվազն Q4 քառորդ, իսկ գիտաժողովի նյութերի դեպքում՝ առնվազն Q2 քառորդին համարժեք SJR ինդեքս (SCImago Journal Rank Indicator) ունեցող պարբերականում (այսուհետ՝ **ՄԳՇ**), իսկ մենագրությունը, կոլեկտիվ մենագրությունը կամ գիտական աշխատությունը (այսուհետ՝ **Մենագրություն**) պետք է ունենա առնվազն 5 տպագրական մամուլ և հրատարակված լինի Web of Science գիտատեղեկատվական հարթակի գրքի հղման ինդեքսի (Book Citation Index) հրատարակիչների ցանկում ներառված հրատարակչությունում:

1.8. **Մրցույթի** հրավերի փաթեթը սահմանում է դրան դիմելու ընթացակարգը, չափանիշները, **Հայտերի** գնահատման փուլերը և շահառու **Հայտերի** ֆինանսավորումն ու հաշվետվողականությունը:

2. Նպատակը

2.1. **Մրցույթի** նպատակներն են.

- խթանել ներպետական և միջազգային համագործակցությունը,
- ներգրավել երիտասարդ հետազոտողների և ասպիրանտների,
- նպաստել երիտասարդ հետազոտողների ինտեգրմանը միջազգային հետազոտական միջավայրին,
- ներգրավել Սփյուռքի գիտական ներուժը,
- բարձրացնել **Կազմակերպության** ներուժը,
- բարելավել գիտական միջավայրը,
- ստեղծել նոր, մրցունակ և հեռանկարային գիտական ստորաբաժանումներ:

3. Ժամկետները

3.1. **Նախագծի** իրականացման տևողությունը 60 ամիս է:

3.2. **Մրցույթին** առցանց դիմելու վերջնաժամկետը 2024 թվականի հունվարի 19-ն է: (**Հայտերի** ուղարկման հնարավորությունը կարգելափակվի Երևանի ժամանակով ժամը 18:00-ին):

3.3. Թղթային տարբերակով **Կոմիտե** ներկայացվող փաստաթղթերի վերջնաժամկետը 2024 թվականի հունվարի 26-ն է:

3.4. **Պայմանագրերը** կնքվում են **Մրցույթի** արդյունքները հայտնի դառնալուց հետո՝ 10-օրյա ժամկետում:

3.5. **Հաշվետվություններն** ուղարկվում են ֆինանսավորման մեկնարկից հետո յուրաքանչյուր 12-րդ ամսվա մինչև վերջին աշխատանքային օրը:

3.6. **Նախագիծը** սկսվում և իրականացվում է **Պայմանագրում** նշված ժամկետներում:

4. Գիտահետազոտական խումբը

4.1. **Նախագիծը** մշակում և իրականացնում է գիտահետազոտական խումբը (այսուհետ՝ **Խումբ**), որը կազմված է առավելագույնը երկու արտերկրի ղեկավար(ներ)ից (այսուհետ՝ **Խմբի ղեկավար**) և 2-5 անդամից՝ համաղեկավար և կատարողներ:

4.2. **Խմբի** անդամները (ներառյալ **Խմբի** համաղեկավարը) կարող են լինել ինչպես Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ, այնպես էլ օտարերկրյա քաղաքացիներ:

4.3. **Խմբի** համաղեկավարը և կատարողները **Նախագծի** իրականացման ընթացքում պետք է հանդիսանան Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ կամ ռեզիդենտներ, ինչպես նաև բնակվեն Հայաստանի Հանրապետությունում:

4.4. **Խմբի** անունից հանդես է գալիս միայն համաղեկավարը՝ **Խմբի ղեկավարի** համաձայնությամբ:

5. Խմբի ղեկավարը

5.1. **Հայտը** ներկայացնում է **Խմբի ղեկավարը**:

5.2. **Խմբի ղեկավար** կարող է լինել այն անձը, ով՝

- ունի գիտական աստիճան,
- հիմնական/պայմանագրային հիմունքով աշխատում և զբաղվում է հետազոտական գործունեությամբ (պրոֆեսոր, դասախոս, հետազոտող, կամ

դրան համարժեք պաշտոն զբաղեցնող) արտերկրի որևէ հետազոտական հաստատությունում (բուհ, գիտական կենտրոն):

- **Խմբի ղեկավարը** վերջին 5 տարիների համար (2019 - 2024 թթ.) տվյալ ուղղությամբ պետք է ներկայացնի՝

  Հավելված 2.1-ով ներկայացված գիտական և գիտատեխնիկական գործունեության «1-5» բնագավառների մասնագիտություններով՝

  - 8 գիտական հրապարակում **ՄԳՇ-ում**
  - կամ ունենա առնվազն 15 Հիրշի ինդեքս (h-index)՝ ըստ «Scopus» (https://www.scopus.com/freelookup/form/author.uri) գիտատեղեկատվական շտեմարանի տվյալների:

  Հավելված 2.1-ով ներկայացված գիտական և գիտատեխնիկական գործունեության «6» բնագավառի մասնագիտություններով՝

  - 4 հրապարակում **ՄԳՇ**-ում **կամ** 1 **Մենագրություն**
  - կամ ունենա առնվազն 3 Հիրշի ինդեքս (h-index)՝ ըստ «Scopus» (https://www.scopus.com/freelookup/form/author.uri) գիտատեղեկատվական շտեմարանի տվյալների:

Մեկ Մենագրությունը «6» բնագավառի մասնագիտությունների համար համարժեք է 4 հրապարակման ՄԳՇ-ում:

5.3. Բեալի ցանկերում (Beall's list, https://beallslist.net/) ներառված կեղծ կամ «գիշատիչ» հրատարակչություններում կամ պարբերականներում հրատարակված հրապարակում ներկայացնելու դեպքում **Հայտը** գիտական փորձաքննության ենթարկելու հարցը կքննարկվի **Հայտերի** գնահատման նպատակով ստեղծված մասնագիտական փորձագիտական խորհրդում (այսուհետ՝ **Խորհուրդ**):

5.4. **Խմբի ղեկավարը** պետք է **Նախագծի** իրականացման ընթացքում յուրաքանչյուր տարի հանրագումարային առնվազն 4 շաբաթ անցկացնի Հայաստանի Հանրապետության ընդունող **Կազմակերպությունում**, ինչպես նաև **Նախագծի** կատարման ընթացքում հանրագումարային առնվազն 60 օր ժամկետով իր ներկայացրած գիտական կազմակերպությունում ընդունի **Խմբի** անդամներին:

5.5. **Խմբի ղեկավարը** չի կարող ընդգրկվել սույն **Մրցույթին** ներկայացված մեկից ավելի **Հայտում,** ինչպես նաև հանդիսանալ «Հեռավար լաբորատորիաների հիմնադրման ծրագիր» (2022; 2023) մրցույթների շահառու:

5.6. **Խմբի ղեկավարը** պատասխանատու է **Խմբի** ձևավորման համար:

6. Խմբի անդամները

6.1. **Խումբը** պետք է ունենա համաղեկավար՝ ծնված 1983 թվականի հունվարի 1-ից հետո:

6.2. **Խմբի** անդամները (ներառյալ **Խմբի** համաղեկավարը) կարող են լինել ինչպես Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ, այնպես էլ օտարերկրյա քաղաքացիներ:

6.3. **Խմբի** համաղեկավարը և կատարողները **Նախագծի** իրականացման ընթացքում պետք է հանդիսանան Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ կամ ռեզիդենտներ, ինչպես նաև բնակվեն Հայաստանի Հանրապետությունում:

6.4. **Խմբում** պետք է ընդգրկվի՝

- առնվազն 3 անդամ (ներառյալ **Խմբի** համաղեկավարը)՝ Հավելված 2.1-ով ներկայացված գիտական և գիտատեխնիկական գործունեության «1-4» բնագավառների համար,
- առնվազն 2 անդամ (ներառյալ **Խմբի** համաղեկավարը)՝ Հավելված 2.1-ով ներկայացված գիտական և գիտատեխնիկական գործունեության «5-6» բնագավառների համար:

6.5. **Խմբի** անդամներից (ներառյալ **Խմբի** համաղեկավարը) առնվազն երկուսը պետք է ծնված լինեն 1988 թվականի հունվարի 1-ից հետո և կարող են լինել առնվազն բակալավրիատի երրորդ կուրսի ուսանողներ:

6.6. **Խմբի** անդամների (ներառյալ **Խմբի** համաղեկավարը) տարիքը կարող է բարձրանալ.

- Հայաստանի Հանրապետության զինված ուժերում ծառայած լինելու դեպքում՝ 2 տարով,
- երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու դեպքում՝ յուրաքանչյուր երեխայի համար՝ 1 տարով:

6.7. Հավելված 2.1-ով ներկայացված գիտական և գիտատեխնիկական գործունեության «1-4» բնագավառների համար կատարողները կարող են լինել **Նախագծի** գիտական և գիտատեխնիկական բնագավառին առնչվող մասնագիտությամբ բակալավրիատի առնվազն առաջին կուրսի ուսանողներ, եթե դպրոցական առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլում 11-րդ կամ 12-րդ դասարաններում արժանացել են առնվազն երրորդ կարգի դիպլոմի:

6.8. **Խմբի** երիտասարդ կատարողներից առնվազն մեկը չպետք է ներառված լինի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման որևէ ծրագրում:

6.9. **Խմբի** անդամները (ներառյալ **Խմբի** համաղեկավարը) չեն կարող ընդգրկվել սույն **Մրցույթին** ներկայացված մեկից ավելի **Հայտերում**, ինչպես նաև չեն կարող հանդիսանալ հետևյալ մրցույթների շահառուներ՝

- «Առաջատար հետազոտությունների աջակցության»,
- «Գիտական խմբերի մեկնարկի կամ լաբորատորիաների (բաժինների) ամրապնդմանն աջակցության» (2021),
- «Գիտական խմբերի կամ լաբորատորիաների (բաժինների) ամրապնդմանն աջակցություն - 2023»,
- «Հայաստանի Հանրապետության գիտական համայնքին արտերկրի գիտնականների ինտեգրմանն աջակցության ծրագիր» (2022; 2023; 2023/2),
- «Հեռավար լաբորատորիաների հիմնադրման ծրագիր» (2022; 2023):

7. Կազմակերպությանը ներկայացվող պահանջները

7.1. **Կազմակերպությունը** պետք է լինի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորմամբ ծրագիր իրականացնող:

7.2. **Կազմակերպությունը** հասանելիություն է ապահովում առկա ենթակառուցվածքներին և սարքավորումներին:

7.3. **Կազմակերպությունը** պետք է աջակցի **Նախագծի** իրականացմանը:

7.4. **Կազմակերպությունը Խմբի ղեկավարին** է տրամադրում **Կազմակերպության** (բուհի ֆակուլտետի) գիտական խորհրդի եզրակացությունը (Board Conclusion), որտեղ հիմնավորվում է **Կազմակերպության** գիտական ուղղություններին **Նախագծի** համապատասխանությունը, կարևորությունը և արդիականությունը:

7.5. **Կազմակերպությունը, Նախագծի** կատարման առնվազն ողջ ընթացքի համար, **Խմբի** համաղեկավարին ներառում է գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորմամբ ծրագրում (եթե ներառված չէ):

7.6. **Նախագծի** իրականացման ընթացքում՝ մինչև 24 ամիսը լրանալը, համաղեկավարի (ստորաբաժանման ղեկավար) և կատարողների (ստորաբաժանման

աշխատակիցներ) ընդգրկմամբ **Կազմակերպությունում** գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորմամբ ձևավորվում է նոր գիտական ստորաբաժանում (խումբ, լաբորատորիա, բաժին), որտեղ **Հայտում** ընդգրկված աշխատակիցների գումարային աշխատաժամանակի տևողությունը պետք է լինի առնվազն շաբաթական 120 ժամ (3 Full Time Equivalent. FTE):

7.7. **Կազմակերպության** ղեկավարը **Խմբի ղեկավարին** է տրամադրում գրություն, որ ծանոթ է **Մրցույթի** հրավերի պայմաններին և պատրաստ է **Նախագծի** հաջող ընթացքի պարագայում **Կազմակերպության** բազային ֆինանսավորմամբ ծրագրի ֆինանսական ռեսուրսներով ապահովել սույն հրավերի **«7.5.»** և **«7.6.»** ենթակետերով նախատեսված պայմանները:

7.8. Ֆինանսական նախահաշվի (այսուհետ՝ **Նախահաշիվ**) «Այլ ծախսեր» հոդվածի «Վերադիր ծախսեր» ենթահոդվածով նախատեսված ֆինանսական միջոցներով **Կազմակերպության** ղեկավարն ապահովում է **Նախագծի** կատարման համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելուն ուղղված ծախսերը:

7.9. **Նախագծի** իրականացման համար անհրաժեշտ սարքերը, նյութերը և ծառայությունները ձեռք են բերվում «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

7.10. Ձեռք բերված սարքերն ու սարքավորումները ներառվում են **Կազմակերպության** հաշվեկշռում, տնօրինման իրավունքը պատկանում է **Կազմակերպությանը՝** հետագայում կանոնադրական նպատակներով (գիտական և գիտահետազոտական աշխատանքների իրականացման) օգտագործման համար:

7.11. **Կազմակերպության, Կոմիտեի** և ֆինանսավորման երաշխավորված **Հայտի** համաղեկավարի միջև կնքվում է գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային թեմաների իրականացման համար պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագիր (այսուհետ՝ **Պայմանագիր**):

8. Ակնկալվող արդյունքները

8.1. **Նախագծի** կատարման 35 ամիսը լրանալուց հետո **Խմբի** անդամները պետք է ունենան որպես աշխատավայր (affiliation) **Կազմակերպության** և սույն հրավերի «**8.5.**» ենթակետով սահմանված նշումներով.

- Հավելված 2.1-ով ներկայացված գիտական և գիտատեխնիկական գործունեության «1-5» բնագավառների մասնագիտություններով ներկայացված **Հայտի** հաշվետվությունում՝
  - առնվազն 4 գիտական հրապարակում **ՄԳՇ**-ում:
- Հավելված 2.1-ով ներկայացված գիտական և գիտատեխնիկական գործունեության «6» բնագավառի մասնագիտություններով ներկայացված **Հայտի** հաշվետվությունում՝
  - առնվազն 2 գիտական հրապարակում **ՄԳՇ**-ում,
  - կամ 1 **Մենագրություն**:

8.2. **Նախագծի** կատարման 35 ամիսը լրանալուց հետո սույն հրավերի «8.1.» կետի պայմանները չկատարելու դեպքում **Նախագծի** ֆինանսավորումը կարող է դադարեցվել՝ **Խորհրդի** եզրակացությամբ:

8.3. **Նախագծի** ավարտից հետո (60-ամսյա կտրվածքով) **Խմբի** անդամները պետք է ունենան որպես աշխատավայր (affiliation) **Կազմակերպության** և սույն հրավերի «**8.5.**» ենթակետով սահմանված նշումներով.

- Հավելված 2.1-ով ներկայացված գիտական և գիտատեխնիկական գործունեության «1-5» բնագավառների մասնագիտություններով ներկայացված **Հայտի** հաշվետվությունում՝
  - առնվազն 8 գիտական հրապարակում **ՄԳՇ**-ում, որոնցից առնվազն երկուսը՝ Q1 և առնվազն երկուսը՝ Q2 քառորդներում ընդգրկված պարբերականներում,
- Հավելված 2.1-ով ներկայացված գիտական և գիտատեխնիկական գործունեության «6» բնագավառի մասնագիտություններով ներկայացված **Հայտի** հաշվետվությունում՝
  - առնվազն 6 գիտական հրապարակումներ ՄԳՇ-ում, որոնցից առնվազն երկուսը՝ Q1 և առնվազն երկուսը՝ Q2 քառորդներում ընդգրկված պարբերականներում,
  - կամ 2 **Մենագրություն**:

Մեկ Մենագրությունը «6» բնագավառի մասնագիտությունների համար համարժեք է ՄԳՇ-ում ընդգրկված 4 հրապարակման:

8.4. Որպես **Նախագծի** արդյունք ներկայացված գիտական հրապարակումներից առնվազն չորսում համաղեկավարը պետք է լինի կամ առաջին, կամ վերջին, կամ նամակագրություն վարող (corresponding author) հեղինակ, կամ ունենա որևէ համարժեք նշում:

8.5. **Նախագծի** շրջանակներում իրականացված հետազոտության արդյունքները հրապարակելիս անհրաժեշտ է նշել **Կոմիտեի** կողմից ստացած աջակցության մասին.

- *This work was supported by the Higher Education and Science Committee of RA (Research project № _____).*

Ուշադրություն. Համապատասխան նշման բացակայության դեպքում հրապարակումը չի համարվի Նախագծի իրականացման արդյունք, հետևաբար՝ հաշվի չի առնվի հաշվետվության մեջ:

8.6. **Նախագծի** կատարման արդյունքում Հավելված 2.1-ով ներկայացված գիտական և գիտատեխնիկական գործունեության «1-5» բնագավառների մասնագիտություններով ակնկալվում է 25000.0 հազար ՀՀ դրամը, իսկ Հավելված 2.1-ով ներկայացված գիտական և գիտատեխնիկական գործունեության «6» բնագավառի մասնագիտություններով 15000.0 հազար ՀՀ դրամը գերազանցող միջազգային գիտական դրամաշնորհի առնվազն մեկ դիմում (submitted grant):

8.7. **Նախագծի** իրականացման ընթացքում **Խմբի** անդամները պետք է ապահովեն **Նախագծի** և/կամ գիտության տվյալ բնագավառի վերաբերյալ գիտահանրամատչելի նյութերի ստեղծում և հանրայնացում (հարցազրույցներ, հրապարակումներ գիտահանրամատչելի ամսագրերում, տեսանյութերի ստեղծում և տարածում, լայն լսարանի համար քննարկումների կազմակերպում և այլն), որոնք հաշվի կառնվեն **Խորհրդի** կողմից ամփոփիչ հաշվետվությունն ընդունելու մասին եզրակացություն տալիս:

8.8. Սույն հրավերի «8.1.» և «8.3.» ենթակետում նշված պայմանը չկատարելը/կատարելը կանդրադառնա հետագայում **Կոմիտեի** հայտարարած մրցույթներին **Խմբի** անդամների ընդգրկմամբ հայտի գնահատականի վրա՝ դրանից հանելով/գումարելով տվյալ մրցույթում հայտի առավելագույն գնահատականի 5 տոկոսի չափով միավոր՝ **Խմբի ղեկավարի** կամ համաղեկավարի ընդգրկված լինելու

դեպքում և 1 տոկոսի չափով միավոր՝ **Խմբի** կատարողներից յուրաքանչյուրի դեպքում: Հանրագումարում կհանվի/կգումարվի տվյալ մրցույթում հայտի առավելագույն գնահատականի ոչ ավելի, քան 5 տոկոսի չափով միավոր: Հետագա մրցույթներին ներկայացված հայտի գնահատականի նվազեցումը կչեղարկվի սույն հրավերի «8.1.» և «8.3.» ենթակետերով նախատեսված պայմանները բավարարելու մասին **Կոմիտե** ներկայացված տեղեկատվության հիման վրա:

II. ՀԱՅՏԻ ԼՐԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

9. Հայտ և անհրաժեշտ փաստաթղթեր ներկայացնելը

9.1. **Հայտը** լրացնում և ներկայացնում է **Խմբի** ղեկավարը՝ rl-armenia-2024.hesc.am առցանց համակարգի միջոցով: **Հայտի** ուղարկման վերջնաժամկետն է 2024 թվականի հունվարի 19-ը (**Հայտի** ուղարկման հնարավորությունն արգելափակվում է հունվարի 19-ը՝ Երևանի ժամանակով ժամը 18:00-ին):

9.2. Թղթային տարբերակով **Կոմիտե** են ներկայացվում հետևյալ փաստաթղթերը՝

- **Խմբի** ղեկավարի դիմումը (Հավելված N 2.3),
- **Նախահաշիվը**,
- **Կազմակերպության** (բուհի ֆակուլտետի) գիտական խորհրդի եզրակացությունը (Board Conclusion), որը պետք է պարունակի **Կազմակերպության** գիտական ուղղություններին **Նախագծի** համապատասխանության, կարևորության և արդիականության վերաբերյալ հիմնավորում,
- **Կազմակերպության** ղեկավարի գրությունը՝ նոր գիտական ստորաբաժանում կազմավորելու վերաբերյալ,
- կատարողների վերջին դիպլոմների պատճենները, իսկ ասպիրանտ կամ ուսանող հանդիսանալու դեպքում՝ համապատասխան տեղեկանք(ներ)ը,
- **Խմբի ղեկավարի** և անդամների մասնագիտական ինքնակենսագրությունները (CV):

9.3. Անհրաժեշտության դեպքում կարող են պահանջվել այլ փաստաթղթեր:

9.4. **Կազմակերպության** ներկայացուցիչը (գիտական քարտուղար կամ այլ) մինչև 2024 թվականի հունվարի 26-ը ներառյալ մեկ ընդհանուր փաթեթով, **Կազմակերպության** ղեկավարի գրությամբ (Հավելված N 2.4), առձեռն **Կոմիտե** է ներկայացնում **Կազմակերպության** կողմից ներկայացված բոլոր **Հայտերին** վերաբերող փաստաթղթերը, աշխատանքային օրերին՝ ժամը 09:00-13:00 և 14:00-18:00 (Օրբելի եղբայրների 22, 7-րդ հարկ, 706 սենյակ):

9.5. **Մրցույթի** վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն և խորհրդատվություն կարելի է ստանալ **Կոմիտեից**, հեռախոս՝ (010) 210140 (ներքին 108), էլեկտրոնային փոստ՝ scexpert@hesc.am:

Ուշադրություն. Կոմիտեն քննարկման է ընդունում միայն առցանց համակարգի կողմից ձևավորված Հայտերը: Հայտերը, որոնք չեն ուղարկվել վերը նշված կարգի և ժամկետների համաձայն, քննարկման ենթակա չեն:

10. Նախահաշվի կազմությունը

10.1. **Նախահաշիվը** կազմված է «Աշխատանքի վարձատրություն» և «Այլ ծախսեր» հոդվածներից: «Այլ ծախսեր» հոդվածը բաղկացած է «Սարքեր, նյութեր և ծառայություններ», «Գործուղումներ», «Խմբի կամ լաբորատորիայի ստեղծում» և «Վերադիր ծախսեր» ենթահոդվածներից:

10.2. **Նախահաշվի** «Աշխատանքի վարձատրություն» հոդվածում Խմբի անդամների (բացառությամբ **Խմբի ղեկավարի**) աշխատանքի ամսական վարձատրության միջին չափն ընդունել 300,0 (երեք հարյուր) հազար դրամ (ներառյալ հարկերը և այլ պարտադիր վճարները):

10.3. Աշխատանքի վարձատրության գումարը վերոնշյալ չափից պակաս նախատեսելու դեպքում տարբերությունը կարող է օգտագործվել **Նախահաշվի** «Այլ ծախսեր» հոդվածում:

10.4. Հայաստանի Հանրապետությունում գտնվելու ժամանակահատվածի ընթացքում **Խմբի ղեկավարի** համար կարող է նախատեսվել հոնորար՝ շաբաթական մինչև 150,0 (մեկ հարյուր հիսուն) հազար դրամ, բայց ոչ ավելի, քան հանրագումարային 3000,0 (երեք հազար) հազար դրամ **Նախագծի** կատարման ողջ ընթացքի համար:

10.5. **Նախահաշվի** «Այլ ծախսեր» հոդվածի «Սարքեր, նյութեր և ծառայություններ», «Գործուղումներ» և «Վերադիր ծախսեր» ենթահոդվածներով 12-ամսվա համար կարելի է նախատեսել 5000,0 հազար; 4000,0 հազար; 3000,0 հազար կամ 2000,0 հազար ՀՀ դրամ՝ համապատասխանաբար 5; 4; 3 կամ 2 անդամից (բացառությամբ **Խմբի ղեկավարի**) բաղկացած **Խմբերի** համար: Այս գումարը կարող է ավելանալ «10.3.» կետով սահմանված տարբերության չափով:

10.6. **Նախահաշվի** «Այլ ծախսեր» հոդվածի «Սարքեր, նյութեր և ծառայություններ» ենթահոդվածով կարող են նախատեսվել գիտական սարքավորումների, հետազոտությունների ընթացքում օգտագործվող նյութերի ձեռքբերման կամ ծառայությունների ծախսերը: Ծառայությունների մատուցման պայմանագրեր կարող է կնքվել միայն իրավաբանական անձանց հետ՝ համաձայնեցնելով **Կոմիտեի** հետ:

10.7. **Նախահաշվի** «Այլ ծախսեր» հոդվածի «Գործուղումներ» ենթահոդվածով նախատեսվող գումարը կարող է օգտագործվել **Նախագծի** իրականացման**,** ընթացքի ու արդյունքների ներկայացման նպատակով միջազգային գիտաժողովներին մասնակցության համար, ինչպես նաև **Խմբի ղեկավարի** և անդամների փոխադարձ այցելությունների ծախսերը հոգալու համար:

10.8. **Նախահաշվի** «Այլ ծախսեր» հոդվածի «Խմբի կամ լաբորատորիայի ստեղծում» ենթահոդվածով առաջին 12-ամսվա համար կարող է հայցվել 15000,0 հազար դրամ, որը կարող է օգտագործվել խմբի կամ լաբորատորիայի ենթակառուցվածքի բարելավման ուղղությամբ և **Նախագծի** կատարման համար անհրաժեշտ այլ ծախսերի համար:

10.9. Գիտական սարքերի և սարքավորումների ձեռքբերումը չի կարող նախատեսվել **Նախագծի** իրականացման վերջին տարում:

10.10. **Նախահաշվի** «Այլ ծախսեր» հոդվածի «Վերադիր ծախսեր» ենթահոդվածով (60 ամսվա համար) կարող է հայցվել մինչև 2500,0 հազար դրամ:

10.11. Գործուղումների օրապահիկը և գիշերավարձը հաշվարկելիս անհրաժեշտ է առաջնորդվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ:

10.12. **Նախահաշվի** բոլոր ենթահոդվածների ծախսերը պետք է հիմնավորել **Նախահաշվի** մեկնաբանության մեջ:

10.13. **Նախահաշվի** հիմնավորվածությունը և բաշխումը կարող են լրամշակվել **Խորհրդի** առաջարկությամբ և **Խմբի ղեկավարի** համաձայնությամբ:

III. ՀԱՅՏԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

11. Հայտերի համապատասխանությունը Մրցույթի պայմաններին

11.1. **Կոմիտեն** ստուգում է.

- **Հայտերի** համապատասխանությունը **Մրցույթի** հրավերի պայմաններին,
- Բեալի ցանկերում *(Beall's list, https://beallslist.net/)* ներառված կեղծ կամ «գիշատիչ» հրատարակչություններում կամ պարբերականներում հրատարակված հրապարակումների առկայությունը **Հայտում**:

11.2. **Հայտը չի քննարկվում, եթե՝**

- չի պարունակում բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը,
- չի բավարարում **Մրցույթի** հրավերի պայմաններին,

- բովանդակությամբ համընկնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող կամ ֆինանսավորված որևէ այլ նախագծի հետ:

11.3. Ստուգման արդյունքները տրամադրում են **Խորհրդին**:

11.4. **Խորհուրդը** քննարկում և հաստատում է գիտական փորձաքննության ենթակա **Հայտերի** ցանկը:

12. Գիտական փորձաքննությունը

12.1. **Խորհուրդը Կոմիտեի** հետ համատեղ մշակում ու հաստատում է **Հայտերի** գիտական փորձաքննության առաջին, երկրորդ և երրորդ փուլերի գնահատման թերթիկները և վարման ընթացակարգը:

12.2. **Կոմիտեի, Խորհրդի** և փորձագետների կողմից **Հայտի** բովանդակության, գիտական փորձաքննության ընթացքի և արդյունքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրումն այլ անձանց արգելվում է՝ համաձայն «Գիտական և գիտատեխնիկական փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դրույթների:

13. Գիտական փորձաքննության առաջին փուլը

13.1. Գիտական փորձաքննության առաջին փուլում **Խորհուրդը**, հաշվի առնելով **Նախագծի** ընդարձակ ամփոփագիրը (Հավելված 2.5), **Խմբի ղեկավարի** և համաղեկավարի գիտական հետագիծը (track record), մասնագիտական ինքնակենսագրությունը (CV), **Կազմակերպության** համապատասխանությունը **Նախագծի** նպատակներին, կոնսենսուսի սկզբունքով ձևավորում է առաջին փուլը հաղթահարած **Հայտերի** ցանկը, որոնք անցնում են գիտական փորձաքննության երկրորդ փուլ:

13.2. Գիտական փորձաքննության երկրորդ փուլ չանցած **Հայտերի Խմբի ղեկավարները** տեղեկացվում են այդ մասին:

14. Գիտական փորձաքննության երկրորդ փուլը

14.1. Գիտական փորձաքննության երկրորդ փուլում **Խորհուրդը Հայտերի Խմբի ղեկավարի** և համաղեկավարի հետ անցկացվում է հարցազրույց: Այս փուլում գնահատվում են **Խմբի ղեկավարի**, համաղեկավարի, կատարողների

մասնագիտական համապատասխանությունը **Նախագծի** նպատակներին, **Կազմակերպությունում** իրականացման նախադրյալները, համապատասխանությունը ոլորտի զարգացման միտումներին, համագործակցության նպատակահարմարությունը, գիտական արդյունքների տնօրինումը և տարածումը, **Նախահաշվի** հիմնավորվածությունը, ինչպես նաև **Մրցույթի** առանձնահատկություններից բխող այլ հարցեր:

14.2. Հարցազրույցի ժամանակ **Խորհրդի** յուրաքանչյուր անդամ լրացնում է հարցազրույցի գնահատման թերթիկը:

14.3. Հարցազրույցի առավելագույն գնահատականը կազմում է **Հայտի** առավելագույն գնահատականի 50 տոկոսը:

14.4. Հարցազրույցի գնահատականը **Խորհրդի** անդամների գնահատականների միջին թվաբանականն է:

14.5. Գիտական փորձաքննության երրորդ փուլ անցնում են այն **Հայտերը**, որոնց Հարցազրույցի գնահատականը կազմում է Հարցազրույցի առավելագույն գնահատականի առնվազն 70 տոկոսը:

14.6. **Կոմիտեն Խմբի ղեկավարին** տրամադրում է գիտական փորձաքննության երկրորդ փուլի արդյունքները և անցողիկ շեմը:

15. Գիտական փորձաքննության երրորդ փուլը

15.1. Գիտական փորձաքննության երրորդ փուլում փորձագետը գնահատում է **Հայտը՝ Նախագիծը** (Հավելված N 2.2), վերջինիս խնդրի արդի վիճակը, նորույթը, հեռանկարը, **Կազմակերպությունում** իրականացման նախադրյալները, համապատասխանությունը ոլորտի զարգացման միտումներին, աշխատանքի ծավալի և իրականացման ժամկետների հիմնավորվածությունը, համագործակցության նպատակահարմարությունը, **Խմբի ղեկավարի**, համաղեկավարի, կատարողների մասնագիտական համապատասխանությունը **Նախագծի** նպատակներին, գիտական արդյունքների տնօրինումը և տարածումը, **Նախահաշվի** հիմնավորվածությունը, ինչպես նաև **Մրցույթի** առանձնահատկություններից բխող այլ հարցեր:

15.2. **Հայտը** գնահատվում է առնվազն երկու փորձագետի կողմից: Որպես փորձագետ կարող է հանդես գալ նաև **Խորհրդի** անդամը:

15.3. Յուրաքանչյուր **Հայտի** համար փորձագետը լրացնում է փորձագետի գնահատման թերթիկ:

15.4. Փորձագետի առավելագույն գնահատականը կազմում է **Հայտի** առավելագույն գնահատականի 50 տոկոսը:

15.5. Երկու փորձագետների գնահատականները փորձագետի առավելագույն գնահատականի 30 և ավելի տոկոսով տարբերվելու դեպքում **Հայտը** գնահատվում է երրորդ փորձագետի կողմից:

16. Գնահատման արդյունքները

16.1. **Հայտի** գնահատականը գիտական փորձաքննության երկրորդ փուլի արդյունքում ձևավորված հարցազրույցի գնահատականի և գիտական փորձաքննության երրորդ փուլի արդյունքում ձևավորված երկու փորձագետների գնահատականների միջին թվաբանականի գումարն է: Եթե **Հայտը** գնահատվել է երեք փորձագետի կողմից, ապա **Հայտի** գնահատականը փորձագետների երկու իրար մոտ գնահատականների միջին թվաբանականի (երեք փորձագետների գնահատականների հավասար տարբերությունների դեպքում՝ երկու առավելագույն գնահատականների միջին թվաբանականի) և հարցազրույցի գնահատականի գումարն է:

16.2. **Կոմիտեն** գիտական փորձաքննության երրորդ փուլ անցած **Հայտերի** գնահատականների հիման վրա ձևավորում է **Հայտերի** վարկանիշային ցանկ՝ գնահատականների նվազման կարգով և ներկայացնում **Խորհրդին**՝ քննարկման:

16.3. **Խորհուրդը** հաստատում է **Հայտերի** գնահատականների վարկանիշային ցանկը և **Կոմիտեի** նախագահին առաջարկում գիտական և գիտատեխնիկական գործունեության յուրաքանչյուր բնագավառի շեմային գնահատականը:

16.4. **Կոմիտեն**, ելնելով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման հատկացումների չափից, որոշում է գիտական և գիտատեխնիկական գործունեության յուրաքանչյուր բնագավառի շեմային գնահատականը և **Նախարարի** հաստատմանն է ներկայացնում ֆինանսավորման երաշխավորված **Հայտերի** ցանկը և ֆինանսավորման չափը:

16.5. **Նախարարի** հրամանով հաստատվում է ֆինանսավորման երաշխավորված **Հայտերի** ցանկը և ֆինանսավորման չափը:

16.6. **Մրցույթի** արդյունքում ֆինանսավորման երաշխավորված **Հայտերի** ցանկը հրապարակվում է **Կոմիտեի** պաշտոնական կայքում:

16.7. **Կոմիտեն Կազմակերպության** ղեկավարին տրամադրում է տվյալ **Կազմակերպության** շահառու **Հայտերի** ցանկը:

16.8. **Կոմիտեն Խմբի ղեկավարին** տրամադրում է գիտական փորձաքննության արդյունքները և անցողիկ շեմային գնահատականը:

IV. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

17. Պայմանագրերի կնքումը

17.1. **Կազմակերպության, Կոմիտեի** և ֆինանսավորման երաշխավորված **Հայտի** համաղեկավարի միջև կնքվում է **Պայմանագիր**:

17.2. **Խմբի** անդամների դրամաշնորհի շրջանակներում կնքված պայմանագրերի պատճենները ներկայացվում են **Կոմիտե:**

17.3. **Պայմանագրերը** կնքվում են **Մրցույթի** արդյունքները հայտնի դառնալուց հետո՝ 10-օրյա ժամկետում:

17.4. **Նախագծերը** սկսվում և իրականացվում են **Պայմանագրում** նշված ժամկետներում:

18. Հաշվետվությունը

18.1. **Նախագծի** իրականացման ընթացքում, ֆինանսավորման մեկնարկից հետո յուրաքանչյուր 12-րդ ամսվա մինչև վերջին աշխատանքային օրը, համաղեկավարը **Կոմիտե** է ներկայացնում ընթացիկ հաշվետվություն, որի հիման վրա **Խորհուրդը** տալիս է եզրակացություն՝ **Նախագծի** ֆինանսավորումը շարունակելու նպատակահարմարության մասին:

18.2. **Նախագծի** իրականացման 35-րդ ամսվա մինչև վերջին աշխատանքային օրը համաղեկավարը **Կոմիտե** է ներկայացնում եռամյա հաշվետվություն՝ ներառելով **Նախագծի** ակնկալվող միջանկյալ արդյունքները (սույն հրավերի «8.1.» ենթակետ), որոնց հիման վրա **Խորհուրդը** տալիս է եզրակացություն՝ **Նախագծի**

ֆինանսավորումը դադարեցնելու կամ ևս 24 ամիս շարունակելու նպատակահարմարության մասին:

18.3. **Նախագծի** իրականացման 60-րդ ամսվա մինչև վերջին աշխատանքային օրը համաղեկավարը **Կոմիտե** է ներկայացնում ամփոփիչ հաշվետվություն, որի հիման վրա **Խորհուրդը** տալիս է հաշվետվությունն ընդունելու մասին եզրակացություն:

18.4. **Նախագծի** կատարման ընթացքում **Կոմիտեն** կարող է իրականացնել **Նախագծի** մշտադիտարկում և արդյունքները ներկայացնել **Խորհրդին:**

18.5. **Նախագծի** ֆինանսավորումը շարունակելու նպատակահարմարության մասին եզրակացություն տալիս **Խորհուրդը** պետք է հաշվի առնի նաև մշտադիտարկման արդյունքները:

18.6. Ընթացիկ հաշվետվությունը սահմանված ժամկետում չներկայացնելու դեպքում **Նախագծի** հետագա ֆինանսավորումը կարող է դադարեցվել:

18.7. **Կոմիտեն** կարող է ֆինանսավորման երաշխավորված **Նախագծերի** անոտացիան և հաշվետվությունը հրապարակել տպագիր կամ էլեկտրոնային եղանակով:

19. Լրացուցիչ տեղեկություններ

19.1. Մտավոր սեփականության հեղինակային կամ արտոնագրային իրավունքի օբյեկտ հանդիսացող նյութեր պարունակող **Նախագիծը** և այնուհետև հաշվետվությունը ներկայացնելու դեպքում **Խմբի ղեկավարը** և համաղեկավարը պետք է առաջնորդվեն «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» և «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դրույթներով:

19.2. **Խմբի** համաղեկավարը **Նախահաշվի** «Այլ ծախսեր» հոդվածում կարող է կատարել ենթահոդվածներով նախատեսված ծախսերի վերաբաշխում՝ ներկայացնելով համապատասխան հիմնավորում և ստանալով **Կոմիտեի** գրավոր համաձայնությունը:

19.3. **Նախագծի** իրականացման ընթացքում (ոչ շուտ քան 12 ամիս անց) համաղեկավարը կարող է դիմել **Կոմիտե՝ Նախագծի** կատարողների թիվը **Նախագծին** առնչվող մասնագիտություն ունեցող առավելագույնը 2 մինչև 35 տարեկան կատարողներով ավելացնելու առաջարկով՝ ներկայացնելով համապատասխան հիմնավորում: Կատարողների թիվն ավելանալու դեպքում համաղեկավարի, **Կազմակերպության**

և **Կոմիտեի** միջև կնքված **Պայմանագրի** գինն ավելանում է յուրաքանչյուր նոր կատարողի համար մինչև 1800,0 հազար դրամով (12 ամսվա կտրվածքով):

19.4. Սույն հրավերի «19.3.» կետով ներգրավված կատարողները չպետք է լինեն Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորմամբ ծրագիր իրականացնող որևէ կազմակերպության աշխատակից:

19.5. **Նախագծի** իրականացման ընթացքում **Խմբի ղեկավարը** կարող է տեղափոխվել Հայաստանի Հանրապետություն առնվազն մինչև **Նախագծի** ֆինանսավորման ավարտը: Այդ նպատակով համաղեկավարը դիմում է **Կոմիտե՝ Նախագծի** անդամների թիվը ևս մեկով ավելացնելու առաջարկով՝ ներկայացնելով համապատասխան հիմնավորում և առաջարկելով **Խմբի ղեկավարին** համարժեք արտասահմանյան գործընկեր: Կատարողների թիվը **Խմբի ղեկավարով** ավելանալու պարագայում **Պայմանագրի** գինն ավելանում է ամսական 600,0 հազար դրամով, իսկ **Խմբի ղեկավարը** ընտանիքի անդամ(ներ)ի հետ Հայաստանի Հանրապետություն տեղափոխվելու դեպքում՝ ամսական 750,0 հազար դրամի չափով:

19.6. **Կազմակերպությունը Խմբի ղեկավարին** ներառում է գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորմամբ ծրագրում՝ Հայաստանի Հանրապետություն տեղափոխվելու պարագայում: Եթե **Խմբի ղեկավարը** ծնվել է 1973 թվականի հունվարի 1-ից հետո, ապա նա կարող է զբաղեցնել սույն հրավերի «7.6.» կետով ձևավորված գիտական ստորաբաժանման ղեկավարի պաշտոնը:

19.7. **Խմբի ղեկավարի** կողմից իր պարտականությունների կատարման անհնարինության դեպքում **Կազմակերպության** ղեկավարի միջնորդությամբ, **Կազմակերպության** գիտական (գիտատեխնիկական) խորհրդի և **Խմբի** անդամների համաձայնությամբ, **Կոմիտեի** գրավոր թույլտվությամբ կարելի է կատարել **Խմբի ղեկավարի** փոփոխություն:

19.8. Համաղեկավարի կողմից իր պարտականությունների կատարման անհնարինության դեպքում **Կազմակերպության** ղեկավարի միջնորդությամբ, **Կազմակերպության** գիտական (գիտատեխնիկական) խորհրդի, **Խմբի ղեկավարի** և **Խմբի** կատարողների համաձայնությամբ, **Կոմիտեի** գրավոր թույլտվությամբ կարելի է

կատարել համաղեկավարի փոփոխություն: Համաղեկավարի փոփոխության դեպքում կնքվում է նոր **Պայմանագիր**:

19.9. Համաղեկավարը կարող է դիմել **Կոմիտե**՝ կատարողի համարժեք փոփոխություն կատարելու համար՝ ներկայացնելով համապատասխան հիմնավորումը և **Խմբի ղեկավարի** համաձայնությունը: Կատարողի փոփոխություն կատարելու դեպքում **Կոմիտե** է ներկայացվում նոր կատարողի հետ դրամաշնորհի շրջանակներում կնքված պայմանագրի պատճենը:

19.10. Համաղեկավարը կարող է դիմել **Կոմիտե**՝ կատարողների թիվը մեկով կրճատելու միջնորդությամբ՝ ներկայացնելով համապատասխան հիմնավորումը և **Խմբի ղեկավարի** համաձայնությունը: Կատարողների թվի կրճատման դեպքում կնքվում է **Պայմանագրի** գնի փոփոխության մասին համաձայնագիր:

19.11. Համաղեկավարը կարող է դիմել **Կոմիտե**՝ կատարողի աշխատանքի վարձատրությունը մինչև երեք ամիս տևողությամբ դադարեցնելու միջնորդությամբ՝ ներկայացնելով համապատասխան հիմնավորումը և **Խմբի ղեկավարի** համաձայնությունը: Եռամսյա ժամկետում կատարող չընդգրկելու դեպքում կատարողների թիվը կրճատվում է մեկով և կնքվում է **Պայմանագրի** գնի (ներառյալ երեք ամսվա աշխատանքի վարձատրության գումարը) փոփոխության մասին համաձայնագիր: Կատարող ընդգրկելու դեպքում **Նախահաշվի** «Աշխատանքի վարձատրություն» հոդվածում ավելացած գումարը **Խմբի** համաղեկավարը կարող է վերաբաշխել **Պայմանագրի** հոդվածների միջև:

19.12. **Խմբի** անդամների Հայաստանի Հանրապետությունից երկու և ավել ամիս բացակայությունը պետք է գրավոր համաձայնեցնել **Կոմիտեի** հետ:

20. Նախագծի ֆինանսավորման դադարեցումը

Կոմիտեն կարող է դադարեցնել **Նախագծի** ֆինանսավորումը, եթե.

- սահմանված ժամկետում չի ներկայացվել ընթացիկ հաշվետվություն կամ հաշվետվության վերաբերյալ **Խորհրդի** կողմից տրվել է բացասական եզրակացություն,
- առանց **Կոմիտեի** գրավոր համաձայնության կատարվել է **Նախահաշվի** «Այլ ծախսեր» հոդվածում ենթահոդվածներով նախատեսված ծախսերի վերաբաշխում,

- առանց **Կոմիտեի** գրավոր համաձայնության **Խմբի** կազմում կատարվել է փոփոխություն,
- առանց **Կոմիտեի** գրավոր համաձայնության **Խմբի** անդամներից որևէ մեկը երկու և ավել ամիս բացակայել է Հայաստանի Հանրապետությունից,
- սույն հրավերի «8.1.» ենթակետում նշված պայմանը չի կատարվել,
- սույն հրավերի «7.5.», «7.6.» և «19.6.» ենթակետերում նշված պայմանը չի կատարվել, ընդ որում՝ այն կանդրադառնա նաև **Կազմակերպությունից Կոմիտե** ներկայացված այլ հայտերի վրա՝ հետագա ծրագրի համար ստեղծված համապատասխան խորհրդի եզրակացությամբ որոշված չափով:

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԴԱՍԻՉՆԵՐՈՎ

1. ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ	***4. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ***
1.1 Մաթեմատիկա	4.1 Անասնաբուծություն, անասնաբուժություն
1.2 Ինֆորմատիկա և համակարգչային գիտություններ	4.2 Բուսաբուծություն
1.3 Ֆիզիկա և աստղագիտություն	4.3 Հողագիտություն, ագրոքիմիա, բույսերի պաշտպանություն
1.4 Քիմիա	4.4 Գյուղատնտեսական կենսատեխնոլոգիա
1.5 Երկրի մասին և դրան հարակից բնապահպանական գիտություններ	***5. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ***
1.6 Կենսաբանական գիտություններ	5.1 Հոգեբանություն
2. ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ	5.2 Տնտեսագիտություն և գործարարություն
2.1 Քաղաքաշինություն և ճարտարապետություն	5.3 Մանկավարժական գիտություններ
2.2 էլեկտրատեխնիկա, էլեկտրոնիկա, էներգետիկա, համակարգչային և տեղեկատվական տեխնոլոգիաներ	5.4 Սոցիոլոգիա
2.3. Մեխանիկա	5.5 Իրավունք
2.4 Մեքենագիտություն և մեքենաշինություն	5.6 Քաղաքական գիտություններ
2.5 Քիմիական տեխնոլոգիաներ	5.7 Սոցիալական և տնտեսական աշխարհագրություն
2.6 Նյութագիտություն	5.8 Զանգվածային լրատվություն և հաղորդակցություն
2.7 Բժշկական սարքաշինություն	***6. ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ***
2.8 Էկոլոգիա	6.1 Պատմություն, հնագիտություն
2.9 Կենսատեխնոլոգիա	6.2 Լեզվագիտություն, գրականագիտություն
2.10 Նանոտեխնոլոգիա	6.3 Փիլիսոփայություն, էթիկա
3. ԲԺՇԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ	6.4 Աստվածաբանություն, կրոնագիտություն
3.1. Ընդհանուր բժշկություն	6.5 Արվեստագիտություն
3.2. Կլինիկական բժշկություն	
3.3. Բժշկական կենսատեխնոլոգիա	

Ն ա խ ա գ ի ծ

Ներկայացնել անգլերեն, մինչև 12 էջ՝ ներառյալ գրաֆիկները, գծագրերը, լուսանկարները և գրականության ցանկը.

1. **Համառոտ բնութագիրը** (անոտացիա)

2. **Հետազոտական խնդրի վերաբերյալ գիտելիքների ներկա վիճակի մասին վերլուծությունը**

3. **Նախագծի նպատակները և խնդիրները**

4. **Հետազոտական նախագիծը**

5. **Նախագծի իրականացման գիտական մեթոդները**

6. **Օրացուցային պլանը** (ըստ կիսամյակների, Գանտի աղյուսակ)

7. **Խմբի ձեռքբերումները տվյալ ոլորտում**

8. **Գիտական ստորաբաժանման զարգացման հեռանկարները** (ռիսկերը և հնարավորությունները)

9. ***Միջազգային համագործակցության նախադրյալները, ինչպես նաև Խմբի ղեկավարի համապատասխանությունը և նպատակահարմարությունը***

10. **Ակնկալվող արդյունքների քանակական և որակական ցուցանիշներ** (գիտական հոդվածներ, գիտաժողովների նյութեր և այլն), նորարարական կարողության օգտագործում (տեխնոլոգիական ներդրում, ցուցադրում, փորձնական նմուշ, նախատիպ և այլն), մտավոր սեփականության տնօրինում (արտոնագիր, հեղինակային իրավունք և այլն), միջազգային համագործակցային կապերի ամրապնդում, համագործակցության հեռանկարներ)

11. **Օգտագործված գրականության ցանկ**

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ԼԵՎՈՆ ՖԱՐՄԱՆՅԱՆԻՆ

ՔԱՂԱՔԱՑԻ

_____
(անուն հայրանուն)
_____ ից
(ազգանուն)
_____
(հասցե)
_____
(հեռախոս)

Դ Ի Մ Ո Ւ Մ

Խնդրում եմ ընդունել «Հեռավար լաբորատորիաների հիմնադրում 2024» մրցույթին մասնակցության «_____» վերնագրով հայտը:

Դիմող՝ _____ (_____)
(ստորագրություն) *(անուն, ազգանուն)*

«____» _____ 2024 թ.

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆԻՆ

Խնդրում եմ ընդունել գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման «Հեռավար լաբորատորիաների հիմնադրում 2024» մրցույթին _(կազմակերպության անվանում)_ից ներկայացված _____ վերնագրերով հայտերը:

Կազմակերպության ղեկավար՝ _____ _____
(ստորագրություն) (ազգանուն անուն)

«____» _____ 2024թ.

Նախագծի վերնագիրը

Ընդարձակ ամփոփագիրը

Ընդարձակ ամփոփագիրը գնահատվում է գիտական փորձաքննության առաջին փուլում, հարկավոր է ներկայացնել անգլերեն, մինչև 2 էջ:
Ընդարձակ ամփոփագիրը պետք է լինի **Նախագծի** հակիրճ տարբերակը և շեշտադրի հետազոտության կարևորությունն ու նպատակահարմարությունը: